

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ

Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ

Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանը այս տարին եւս ունեցաւ տարեկփակի իր երբեակի հանգիստութիւնները եւ աւանդական «Պարգը»:

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Անոնցմէ առաջինն էր Դաշտահանդէսը, որ տեղի ունեցաւ 14 Մայիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, ժամանկ. Վարժարանի մարզադաշտին վրայ: Ներկայ էին Միտրան Հայրեր եւ բոսական թիւով ժողովուրդ:

Հանդէսին իր մասնակցութիւնը բերաւ Դաշտահանդէսը եւ Երկրորդական առաջին հինգ կարգերու Երկսեռ ուսանողութեան մեծագոյն մասը. բաժնուած, ըստ նախընթաց տարիներու՝ Երկու մրցորդ խումբերու: Տղաք՝ Արարատ (կարմիր) եւ Մատիս (կանաչ), իսկ աղջիկներ՝ Սեւան (կապույտ եւ Երեան (վարդագոյն):

Հանդէսին յայտագիրը հոգի էր որ աշխատանք: Մարզիկներու առջնացքին ետք, նոր մարզիչ Պրն. Լիպարիտ Պետրոսեանի կողմէ մարզուած Վարժարանի աշակերտները, ինչպէս նաեւ Օրդ. Շուշան Յովակեանի կողմէ մարզուած աշակերտուհիները նկատելի յաջողութեամբ յաջորդաբար կատարեցին չուլտական մարզանք, երկար եւ բարձր ոտու մ. 100-600 մէթր վազքեր, զրօշարշու, պարանազութիւն եւլին: Ամէն տարիներու յատուկ այս խաղերէն բացի, այս տարուան Դաշտահանդէսը իր խաղացանկին վրայ աւելցուցած էր զինդարձակութի, զուարճալիքներու եւ աշխատանքներ, որոնք կը վերաբերին մեր աշակերտներու մարմնական ճկունութեան մասին, ինչպէս նաեւ բարոյական ու իմացական դաստիարակութեանց կողքին՝ ֆիզիքական կրթութիւնն ալ բնականաբար կարեւորութեան մասին մեր Վարժարանէն ներս, մեկնելով միշտ «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանաբանէն:

Երկու ժամեր տեւող այս հանդէսը վերջացաւ մրցանակաբաշխութեամբ: Տեսուչ Տ. Կիրակի Ս. Վարդապետ բաժանկերով պարգևատրեց յաջողակն խումբի խմբագրական ու տարւոյս բնթագքին Վարժարանէն ներս կատարուած մարզական մէկէ աւելի խաղերու մէջ ուշադրաւ յաջողութիւն արձանագրած մարզիկները, իսկ մէտաղներով՝ Դաշտահանդէսի իւրաքանչիւր մարզի մէջ առաջին եւ Երկրորդ հանգիստացողները:

ԱՄԱՎԱՐՁԻ ՀԱՆԴԵՍ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԲԱԺՆԻՆ

4 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, ժամանկ. Վարժարանի հանդիսարանին մէջ կայացաւ Ս. Թարգմ. Վարժարանի Մանկապարտէզի Ամալկերէի Հանդէսը, Հողչ. Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու պատկանելի բաղժութեան մը ներկայութեան:

Աւելի քան մէկուկէս ժամերու բնթագքին Մանկապարտէզի Երկու, եւ Նախակրթարանի առաջին երկու կարգերու երկսեռ փոքրիկները հաճելի ժամանց պարզեւեցին ներկաներուն՝ իրենց նկատելի յաջողութեամբ կատարուած հայկական պարերու, խմբերգներով, արատաստութիւններով ու կատակախառն տրամախօսութիւններով, բոլորն ալ արդարեւ այն արդիւնաւոր ու զոհարեւոր ճիշդին, զոր տարած էր Մանկապարտէզի ուսուցչական կազմը, վերին հաղորդութեամբ Օրդ. Տիգրանուհի Նալպետեանին:

Իր փակման խօսքին մէջ Տեսուչ Հողչ. Տ. Կիրակի Ս. Վարդապետ մտադրութիւն յայտնեց նրապարտական Միութիւն մը հիմնելու յատուկ կայ տարւելը: Զանկն, ծնողաց զործակցութիւնը ապահովելու համար Վարժարանի կրթական զործին, ու «Պահպանելով փակեց հանդէսը:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՃՆԻՆ

Երուսաղէմի քաղաքական վերջին անցուղարձեւեր պատճառ դարձան որ դպրոցական տարեւրջանի միակ-ման հանդիսութիւնը կողք երկրորդական բաժնի Ա-մաժերջի Հանգէսը յետաձգուի իր սահմանուած թը-ւականէն երեք շաբաթներով: 2 Յուլիս, Կիրակի կէ-սօրէ ետք ժամը 3:30ին, Ս. Թ. Վարժարանի արահին մէջ էր որ տեղի ունեցաւ ան, ի ներկայութեան Հոգւ. Վարդապետ Հայրերու, ինչպէս նաեւ ծնող-ներու եւ հրաւիրեալներու կողմից բաղմունքի:

Հանգէսին յայտարարը մեծաւ մասամբ դու-ծաղորուեցաւ ընթացաւարտ դասարանի աշակերտ-աշակերտուհիներուն կողմէ: Անոնք բրին առեկա-խօսութիւններ, ապրումով ու հասկացողութեամբ արտասանեցին քերթումներ եւ կատարեցին ու-ղերմներ: Իսկ երկրորդական միւս դասարաններէն

կազմուած երգչախումբ մը, Վարժարանին երաժը-տութեան ուսուցիչ Հոգւ. Տ. Ղեւոնդ Արք. Սա-մուրեանի ղեկավարութեամբ խմբերգեց ազգային մի-քանի երգեր:

Հանգէսին երկրորդ բաժնին, Տեսուչ Հոգւ. Տ. Կիրակի Ծ. Վարդապետ կարգաց Վարժարանի միամե-կայ դարձունդութեան տեղեկագիրը (որ կ'երեւի ՍԻՄՆԻ այս թիւով) եւ վկայականներու ու մրցա-նակներու բաշխումէն ետք իր խօսքը ուղղելով 11 նոր շրջանաւարտներուն, առանձինն անդրադարձաւ օմիւրոքի մէջ մեր ազգայաւազայանման կարեւոր աղ-ղակներուն, վեր հանելով իւրաքանչիւրին զերբ մեր համայնքային կեանքէն ներս: Կոչ բրաւ ընթացա-ւարտներուն որ լեցուին մէշտ Թարգմանիչ Հայ-րերու ողիով, այն ողիով՝ որ իրենց ջանքուեցաւ 14 տարիներ շարունակ այս նուիրական յարկէն ներս: Ժամը 5ին հանգէսը վերջ դրաւ Տէրունական աղօթքի միարեան երգեցողութեամբ: